



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

01 հուլիսի 2021 թվականի թիվ 111-Ա

ք. Երևան

«ԱԶՍՏՈՒԹՅՈՒՆ ԹԻՎԻ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏԱՍԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով) ուսումնասիրելով 2021 թվականի հունիսի 15-ին իր նախաձեռնությամբ հարուցված թիվ 35 վարչական վարույթի նյութերը՝ *պարզեց*.

Հանձնաժողովը «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) վերապահված իր վերահսկողական գործառույթներն իրականացնելիս Հեռարձակողների գործունեության մշտադիտարկման արդյունքում արձանագրել է հեղինակագործված «ԱԶՍՏՈՒԹՅՈՒՆ ԹԻՎԻ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Հեռարձակող) «Ազատություն թիվի» տեսալսողական ծրագրի եթերի մշտադիտարկման ընթացքում Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի և Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2020 թվականի օգոստոսի 28-ի «Լսողական ինդիքներ ունեցող սպառողների համար օրվա ընթացքում համապատասխանաբար առնվազն մեկական մանկական և լրատվական տեսալսողական հաղորդումներ ժեստերի լեզվով թարգմանությամբ կամ հայերեն ենթագրով հեռարձակման եթերային ժամերը սահմանելու մասին» թիվ 82-Ա որոշման դրույթների պահանջների խախտում:

Հանձնաժողովը ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով՝ 2021 թվականի հունիսի 15-ին Հեռարձակողի նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ հիմք ընդունելով Հանձնաժողովի կողմից Հեռարձակողի գործունեության դիտարկման արդյունքների հիման վրա 2021 թվականի հունիսի 15-ին կազմված մշտադիտարկման իրականացման և արդյունքների վերաբերյալ արձանագրությունը, որն Օրենքի 42-րդ հոդվածի 18-րդ մասի համաձայն՝ հիմք է հանդիսանում վարչական վարույթ հարուցելու համար, իսկ հարուցված վարչական վարույթի շրջանակներում ծառայում է որպես վարչական վարույթի ապացույց:

Ըստ արձանագրության՝ Հեռարձակողի կողմից 2021 թվականի հունիսի 07-ից հունիսի 11-ը ներառյալ հեռարձակվել է «Ազատություն լրատվական կենտրոն» լրատվական տեսալսողական հաղորդումը՝ ժամը 18:00-ին և 20:00-ին: Սակայն նշված լրատվական տեսալսողական հաղորդումները Հանձնաժողովի կողմից սահմանված ժամերին՝ 17:00-22:00-ն ընկած ժամանակահատվածում, ժեստերի լեզվով թարգմանությամբ կամ հայերեն

ենթագրով չեն հեռարձակվել՝ խախտելով Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի և Հանձնաժողովի 2020 թվականի օգոստոսի 28-ի թիվ 82-Ա որոշման դրույթների պահանջները:

Հանձնաժողովը 2021 թվականի հունիսի 15-ին հարուցված վարչական վարույթի մասին ծանուցել է Հեռարձակողին և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց պարզաբանումները և բացատրությունները:

Հարուցված վարչական վարույթի ընթացքում 2021 թվականի հունիսի 19-ին Հանձնաժողով ներկայացրած գրավոր բացատրությունում Հեռարձակողը հայտնել է, որ ընդունում է Հանձնաժողովի կողմից ծանուցված իրավախախտման փաստը, սակայն մինչ այժմ ժեստերի լեզվով թարգմանություն չապահովելու պատճառն իրենց սուղ ռեսուսներն են եղել և հայտնում է, որ Հեռարձակողի կողմից քայլեր կձեռնարկվեն նշված թերությունը վերացնելու ուղղությամբ՝ ապահովելով ժեստերի լեզվով թարգմանություն «Ազատություն թիվի» տեսալսողական ծրագրի ժամը 18:00-ի «Ազատություն լրատվական կենտրոն» լրատվական տեսալսողական հաղորդման հեռարձակման ընթացքում:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Այսպիսով, վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է հետևյալը.

Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Հեռարձակողները, որոնք արտադրում են նաև մանկական և (կամ) լրատվական տեսալսողական հաղորդումներ, պարտավոր են իրենց ծրագրերում ապահովել լսողական խնդիրներ ունեցող սպառողների համար տեղեկատվության ընկալման մատչելիությունը՝ օրվա ընթացքում՝ կարգավորող պետական մարմնի սահմանած ժամերին, համապատասխանաբար առնվազն մեկական մանկական և լրատվական տեսալսողական հաղորդում ներկայացնելով ժեստերի լեզվով թարգմանությամբ կամ հայերեն ենթագրով:

Հանձնաժողովի կողմից 2020 թվականի օգոստոսի 28-ի թիվ 82-Ա որոշմամբ սահմանվել են «Լսողական խնդիրներ ունեցող սպառողների համար օրվա ընթացքում համապատասխանաբար առնվազն մեկական մանկական և լրատվական տեսալսողական հաղորդումներ ժեստերի լեզվով թարգմանությամբ կամ հայերեն ենթագրով հեռարձակման եթերային ժամերը» և որոշման 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ տեսալսողական մեդիաձառայություններ մատուցողները, որոնք արտադրում են նաև մանկական և (կամ) լրատվական տեսալսողական հաղորդումներ, պարտավոր են իրենց ծրագրերում ապահովել լսողական խնդիրներ ունեցող սպառողների համար տեղեկատվության ընկալման մատչելիությունը՝ օրվա ընթացքում համապատասխանաբար առնվազն մեկական մանկական և լրատվական տեսալսողական հաղորդումների հեռարձակումը հետևյալ եթերային ժամերին.

2) լրատվական տեսալսողական հաղորդումները ժեստերի լեզվով թարգմանությամբ կամ հայերեն ենթագրով պետք է եթեր հեռարձակվեն ժամը՝ 17:00-ից մինչև 22:00-ն ընկած ժամանակահատվածում:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը՝ իրականացնում է Հեռարձակողների և օպերատորների գործունեության մշտադիտարկում:

Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հեռարձակողների գործունեության մշտադիտարկումն իրականացվում է ուղղակի դիտարկման, իսկ օպերատորի դեպքում՝ նաև տեղում դիտարկում իրականացնելու միջոցով, իսկ նույն հոդվածի 8-րդ և 9-րդ մասերը սահմանում են

«8. Մշտադիտարկման արդյունքներով կարգավորող պետական մարմնի ներկայացուցիչը մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ կազմում է արձանագրություն:

9. Մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրության մեջ նշվում են մշտադիտարկման արդյունքների համառոտ շարադրանքը, ինչպես նաև վարչական վարույթ հարուցելու կամ հարուցված վարչական վարույթի համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստական հանգամանքները, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:»

Փաստում ենք նաև, որ Հեռարձակողը Հանձնաժողովի կողմից հեղինակագործված իրավաբանական անձ է (Հանձնաժողովի 2021 թվականի փետրվարի 03-ի թիվ 24-Ա որոշման համաձայն «ԱԶՍՏՈՒԹՅՈՒՆ ԹԻՎԻ» ՍՊ ընկերությանը տրվել է Հեռարձակողի կարգավիճակ (ՀՎN039 հեղինակագործման վկայական)), որը կազմում և սպառողին է ներկայացնում տեսալսողական տեղեկատվություն և խմբագրական պատասխանատվություն է կրում տեսալսողական արտադրանքի բովանդակության համար և պարտավոր է պահպանել տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջները, իսկ օրենքի դրույթները խախտելու դեպքում կրել պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով, ուստի, օրենքի պահանջի չկատարումն ինքնին բերում է պատասխանատվության:

Հեռարձակողը պետք է հաշվի առնի, որ օրենքներով հստակ սահմանվում են իրավական նորմեր, որոնց չպահպանելը առաջացնում են իրավական հետևանքներ և Հեռարձակողը պատասխանատվություն է կրում տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող օրենսդրության կիրառման ապահովման համար և տվյալ դեպքում Հեռարձակողը պարտավոր էր պահպանել Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի և Հանձնաժողովի 2020 թվականի օգոստոսի 28-ի թիվ 82-Ա որոշմամբ սահմանված դրույթների պահանջները:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 23-րդ կետերի համաձայն՝

1) **տեսալսողական մեդիաձառայություն** մատուցող (այսուհետ՝ Հեռարձակող, լսողական մեդիաձառայություն մատուցող՝ Լսողական ծրագրեր հեռարձակող) Հայաստանի Հանրապետության հիմնադրած կազմակերպություն կամ կարգավորող պետական մարմնի հեղինակագործ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը կազմում և սպառողին է ներկայացնում տեսալսողական տեղեկատվություն և խմբագրական պատասխանատվություն է կրում տեսալսողական արտադրանքի բովանդակության համար:

23) **հեղինակագործում**՝ կարգավորող պետական մարմնի կողմից ֆիզիկական կամ իրավաբանական անձին Հեռարձակողի կարգավիճակ տրվող փաստաթղթի տրամադրում:

Հանձնաժողովն ամրագրում է, որ Հեռարձակողները տեսալսողական տեղեկատվություն հեռարձակելիս պարտավոր են պահպանել Օրենքով և Հանձնաժողովի որոշումներով սահմանված տեսալսողական տեղեկատվությանը ներկայացվող պահանջները: Հեռարձակողների տեսալսողական տեղեկատվությանը ներկայացվող ընդհանուր պահանջները սահմանված են Օրենքի 2-րդ գլխում, մասնավորապես 6-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Հեռարձակողները, որոնք արտադրում են նաև լրատվական տեսալսողական հաղորդումներ, պարտավոր են իրենց ծրագրերում ապահովել լսողական խնդիրներ ունեցող սպառողների համար տեղեկատվության ընկալման մատչելիությունը՝ օրվա ընթացքում՝ Հանձնաժողովի սահմանած ժամերին, առնվազն մեկական լրատվական տեսալսողական հաղորդում ներկայացնելով ժեստերի լեզվով թարգմանությամբ կամ հայերեն ենթագրով:

Հանձնաժողովն ուսումնասիրելով վարչական վարույթի նյութերը, վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված փաստերի ուսումնասիրության արդյունքում արձանագրում է, որ «Ազատություն թիվի» տեսալսողական ծրագրի կողմից 2021 թվականի հունիսի 07-ից 11-ը

ներառյալ հեռարձակված «Ազատություն լրատվական կենտրոն» լրատվական տեսալսողական հաղորդումը չի հեռարձակվել ժեստերի լեզվով թարգմանությամբ կամ հայերեն ենթագրով:

Վարչական վարույթի քննարկման նիստին մասնակցում էր նաև Հեռարձակողի ներկայացուցիչը, ով ևս մեկ անգամ ներկայացրեց 2021 թվականի հունիսի 19-ին ներկայացված գրավոր բացատրությունում նշված փաստերը և հավաստիացրեց, որ նշված իրավական նորմի պահանջի մասին տեղյակ չեն եղել: Ներկայացուցիչը խնդրեց չկիրառել վարչական տույժ՝ խոստանալով այսուհետ իրենց լրատվական հաղորդումները համապատասխանեցնել օրենքի դրույթների պահանջներին:

Այսպիսով, վարչական վարույթի նյութերի ուսումնասիրության և համադրման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է, որ Օրենքով Հեռարձակողների տեսալսողական տեղեկատվությանը ներկայացվող ընդհանուր պահանջներ են սահմանված՝ մասնավորապես՝ լրատվական տեսալսողական հաղորդումներ արտադրող Հեռարձակողների համար պարտավորություն է սահմանված իրենց ծրագրերում ապահովել լսողական խնդիրներ ունեցող սպառողների համար տեղեկատվության ընկալման մատչելիությունը՝ օրվա ընթացքում՝ Հանձնաժողովի սահմանած ժամերին, առնվազն մեկական լրատվական տեսալսողական հաղորդում ներկայացնելով ժեստերի լեզվով թարգմանությամբ կամ հայերեն ենթագրով: Հեռարձակողի կողմից 2021 թվականի հունիսի 07-ից 11-ը ներառյալ «Ազատություն լրատվական կենտրոն» լրատվական տեսալսողական հաղորդումը Հանձնաժողովի որոշմամբ սահմանված ժամերին՝ 17:00-ից մինչև 22:00-ն ընկած ժամանակահատվածում, հեռարձակվել է առանց ժեստերի լեզվով թարգմանությամբ կամ հայերեն ենթագրով՝ խախտելով Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասով և Հանձնաժողովի 2020 թվականի օգոստոսի 28-ի թիվ 82-Ա որոշման 2-րդ մասի 2-րդ կետով սահմանված պահանջները:

Նշված խախտումը համապատասխանում է Օրենքի 57-րդ հոդվածի 14-րդ մասի հատկանիշներին:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ կարգավորող պետական մարմինը՝ Օրենքի խախտման կամ իր որոշումները չկատարելու դեպքում կիրառում է պատասխանատվության միջոցներ:

Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կարգավորող պետական մարմնի կողմից տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու և դրանց մասին կարգավորող պետական մարմնին գրավոր տեղեկացվելու դեպքում կարգավորող պետական մարմինը կիրառում է հետևյալ վարչական տույժերը.

- 1) գրավոր նախազգուշացում.
- 2) տուգանք.
- 3) հեղինակագրման կամ լիցենզիայի գործողության կասեցում.
- 4) հեղինակագրման կամ լիցենզիայի գործողության դադարեցում:

Օրենքի 57-րդ հոդվածի 14-րդ մասի համաձայն՝ սույն օրենքի 6-րդ հոդվածի պահանջները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.03 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասով, 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով, 55-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ

կետով, Հանձնաժողովի 2020 թվականի օգոստոսի 28-ի թիվ 82-Ս որոշման 2-րդ մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 57-րդ հոդվածի 14-րդ մասը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշեց**.

1. «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԹԻՎԻ» ՍՊ ընկերության նկատմամբ կիրառել «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 57-րդ հոդվածի 14-րդ մասով սահմանված տույժը՝ տուգանելով սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ԹԻՎԻ» ՍՊ ընկերությանը պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

01 հուլիսի 2021թ.
ք. Երևան